ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

09.04.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2018/24

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.02.2018թ. թիվ 03/26-3/2179-18 գրությամբ «Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 06.02.2018թ. թիվ ԴՎԱ/435 գրության հիման վրա, 09.02.2018թ. թիվ 03/26-3/2179-18 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. **«Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

«Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 20.02.2018թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության և «Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ի միջև 31.05.2017թ. կնքվել է ծառայությունների մատուցման «ՇՀԱՊՁԲ-9/3-5» ծածկագրով պայմանագիր:

«ՇՀԱՊՁԲ-9/3-5» ծածկագրով գնման պայմանագրին կից գնման ժամանակացույցի համաձայն՝ «Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ն, ի թիվս այլ ապրանքատեսակների, պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը մատակարարել 40 դոզա «Հակագանգրենոզ շիճուկ 20,0»՝ 3,360,000 (երեք միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ ընդհանուր գնով, համապատասխանաբար 20 հատը՝ 3-րդ եռամսյակում, իսկ մյուս քսան հատը՝ 4-րդ եռամսյակում, սակայն ոչ ուշ, քան մինչև 30.11.2017թ:

Սակայն այնուհետև, ՀՀ պաշտպանության նախարարության և «Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից վերանայվել է պայմանագրին կից գնման ժամանակացույցը և սահմանվել է նոր գնման ժամանակցույց (կցվում է), որի համաձայն «Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ի պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը 4-րդ եռամսյակում մինչև 30.11.2017թ. մատակարարել 40 դոզա «Հակագանգրենոզ շիճուկ 20,0»:

24.11.2017թ. ՌԴ գործընկեր կազմակերպությունը իրազեկել է «Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ին (կցվում է), որ տվյալ դոզայի արտադրությունը ժամանակավորապես դադարեցվել է արտադրող ընկերության կողմից և մինչև 2017թ.-ի վերջ չի արտադրվելու (կցվում է):

Հիմք ընդունելով վերոնշյալ գրությունը՝ «Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարությանը 27.11.2017թ. հայտնել է առաջացած խնդրի վերաբերյալ, որին ի պատասխան 05.12.2017թ. ՀՀ պաշտպանության նախարարությունը պատասխանել է. «Ի պատասխան Ձեր ՀՀ ՊՆ ՆՏԱԴ դեպարտամենտի պետին ուղղված առ 27.11.2017թ. գրության, տեղեկացնում եմ, որ «Իմունային շիճուկ» ապրանքատեսակը արտադրվում է տարբեր ընկերությունների կողմից և տարբեր երկրներում, ուստի մեկ արտադրողի կողմից արտադրության դադարեցումը, որպես ֆորս մաժոր դիտարկելը հիմնավորված չէ: Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացնում եմ, որ անհրաժեշտ է մատակարարումներն իրականացնել «ՇՀԱՊՁԲ-9/3-5» պայմանագրի գնման ժամանակացույցին և

տեխնիկական բնութագրին համապատասխան, հակառակ կքննարկվի պայմանագիրը միակողմանի լուծելու հարցը՝ օրենքից բխող բոլոր հետևանքներով»:

Այնուհետև, ՀՀ պաշտպանության նախարարությունն Ընկերությանն ուղղված 02.02.2018թ. թիվ ԴՎԱ/400 գրությամբ հայտնել է հետևյալը. «ՀՀ պաշտպանության նախարարության և «Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ի միջև 31.05.2017թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-9/3-5» ծածկագրով գնման պայմանագրի համաձայն՝ Ձեր ընկերությունը, ի թիվս այլ ապրանքատեսակների, պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը մինչև 30.11.2017թ. մատակարարել 40 դոզա «Հակագանգրոնոզ շիճուկ 20,0»՝ 3,360,000 (երեք միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ ընդհանուր գնով: Հիմք ընդունելով վերը նշված պայմանագրի 3.1.7 կետը, 3.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2017թ. հունվարի 29-ին միակողմանի՝ «Հակագանգրոնոզ շիճուկ 20,0»՝ ապրանքատեսակի մասով լուծում է «ՇՀԱՊՁԲ-9/3-5» ծածկագրով պայմանագիրը: Տեղեկացնում եմ, որ «Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին որպես տույժ փոխանցել 108,360 (հարյուր ութ հազար երեք հարյուր վաթսուն) ՀՀ դրամ՝ մատակարարման ժամկետների խախտման համար (պայմանագրի 7.2 կետի համաձայն): Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ից կգանձվի նաև վերը նշված պայմանագրի կատարման ապահովման գումարը, որը կազմում է 1,310,520 (մեկ միլիոն երեք հարյուր տասը հազար հինգ հարյուր քսան) ՀՀ դրամ»:

Այսպիսով, ՀՀ պաշտպանության նախարարությունը 2018թ. (գրությամբ սխալմամբ նշվել է 2017թ.) հունվարի 29-ին միակողմանի մասնակի լուծել է «ՇՀԱՊՁԲ-9/3-5»ծածկագրով պայմանագիրը՝ «Հակագանգրենոզ շիճուկ 20,0» ապրանքատեսակի մասով:

Համաձայն «ՇՀԱՊՁԲ-9/3-5» ծածկագրով պայմանագրի Հավելված 1-ի՝ գնման ժամանակացույցի, նշված ապրանքատեսակի համար («Հակագանգրենոզ շիճուկ 20,0») մատակարարման ժամկետ է սահմանվել 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 30.11.2017թ.:

ՀՀ պաշտպանության նախարարությունը ընկերությանը ուղղված 02.02.2018թ. ԴՎԱ/400 գրությամբ իր հերթին փաստել է, որ «Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ն մինչև 30.11.2017թ. չի մատակարարել «Հակագանգրենոզ շիճուկ 20,0» ապրանքատեսակը:

Այսպիսով, վերոհիշյալից բխում է, որ «Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից, ըստ էության, մեկ անգամ խախտվել է պայմանագրով նախատեսված մեկ պարտավորությունը, այն է՝ 4-րդ եռամսյակում (բայց ոչ ուշ, քան 30.11.2017թ.) չի մատակարարել ընթացակարգի 74-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքը (Հակագանգրենոզ շիճուկ 20,0), ինչը հանգեցրել է պատվիրատուի կողմից այդ մասով պայմանագրի միակողմանի մասնակի լուծարմանը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «ՇՀԱՊՁԲ-9/3-5» ծածկագրով պայմանագիրը կնքվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/4-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի արդյունքում, իսկ նշված ընթացակարգի հրավերը հաստատվել է գնահատող հանձնաժողովի կողմից 2017թ. մարտի 6-ի թիվ 1 որոշմամբ:

Իսկ ինչպես հայտնի է, «Գնումների մասին» 2016թ. դեկտեմբերի 16-ին ընդունված օրենքն ուժի մեջ է մտել 2017թ. ապրիլի 25-ից, այսինքն «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/4-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/3» ծածկագրով ընթացակարգը հայտարարելուց հետո:

Մինչդեռ, «Գնումների մասին» 2016թ. օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նշված օրենքի պահանջները չեն տարածվում մինչև տվյալ օրենքն ուժի մեջ մտնելն սկսած և չդադարած, ինչպես նաև կնքված և գործող գնման գործարքների վրա, իսկ դրանց հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների կնքման պահին գործող իրավական ակտերով:

Այլ կերպ ասած, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/4-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/3» ծածկագրով ընթացակարգի հետ կապված հարաբերությունները առաջացել են մինչև «Գնումների մասին» 2016թ. ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը, ուստի «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/4-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-9/3» ծածկագրով ընթացակարգի հետ կապված հարաբերությունները, այդ թվում նաև այդ ընթացակարգի արդյունքում կնքված

պայմանագրի վրա տարածվում են «Գնումների մասին» 2010թ. ՀՀ օրենքի կարգավորումները:

Հայտնի է, որ «Գնումների մասին» 2010թ. ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, որպեսզի «Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ն ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, «Գնումների մասին» 2010թ. ՀՀ օրենքի համաձայն՝ անհրաժեշտ է, որպեսզի ընկերությունը հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի, քան մեկ անգամ խախտի պայմանագրով նախատեսված պարտավորություն և այնուհետև ներկայացնի հայտ: Մինչդեռ ինչպես երևում է վերը շարադրված փաստերից, «Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ն թույլ է տվել պայմանագրով նախատեսված ընդամենը մեկ խախտում, այն է՝ 4-րդ եռամսյակում չի մատակարարել ընթացակարգի 74-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքը (Հակագանգրենոզ շիճուկ 20,0), ինչը հանգեցրել է պատվիրատուի կողմից այդ մասով պայմանագրի միակողմանի մասնակի լուծարմանը:

Ընկերությունը գտնում է, որ նման պայմաններում առկա չէ «Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ին «Գնումների մասին» 2010թ. ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում թույլ տալու հիմքով վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքը:

Պետք է նշել, որ նման հիմքերով պաշտոնական ընթացակարգեր քննելիս՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը նույնպես հանգել է նույն դիրքորոշմանը:

Այսպես, 14.11.2017թ. կայացրած ՍՑ-ԷՍ-2017/57 որոշմամբ, ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը արձանագրել է, որ «Մակսիմ» ՍՊԸ-ն 2-րդ եռամսյակում չի մատակարարել 500 հատ ձայներիզ, բայց միևնույն ժամանակ արձանագրել է, որ առկա չէ

«Գնումների մասին» 2010թ. ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, և այդ հիմքով մերժել մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնած պաշտոնական ընթացակարգը:

Ընկերությունը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է հաշվի առնել այն հանգամանքը, որ 74-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի մատակարարումը չկատարելը իրականում պայմանավորված է եղել միայն նրանով, որ տվյալ ապրանքի արտադրությունը դադարեցվել է արտադրող ընկերության կողմից, հակառակ դեպքում «Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ն պատշաճ կկատարար նաև պայմանագրային այդ պարտավորությունը:

Ընկերությունը գտնում է, որ «Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից թույլ է տրվել «Գնումների մասին» 2010թ. ՀՀ օրենքով նախատեսված միայն մեկ խախտում, այն է՝ 4-րդ եռամսյակում չի մատակարարել «Հակագանգրենոզ շիճուկ 20,0» ապրանքատեսակը, ինչը բավարար չէ ընկերությանը «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» ներառելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է հաշվի առնել նշված փաստարկները և «Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 14.02.2018թ. ժամը 10:30-ի և 20.02.2018թ. ժամը 12:10-ի նիստերի վերաբերյալ, 14.02.2018թ. ժամը 10:30-ի նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու) 06.02.2018թ. թիվ ԴՎԱ/435 գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ի միջև 31.05.2017թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-9/3-5» ծածկագրով գնման պայմանագրի 3.1.7 կետը, 3.1.7.1 կետի «բ» ենթակետը, ՀՀ

պաշտպանության նախարարությունը 29.01.2018թ. միակողմանի «Հակագանգրենոզ շիճուկ 20,0» ապրանքատեսակի մասով լուծել է Պայմանագիրը:

Պատվիրատուն հայտնել է, որ վերոհիշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 05.02.2018թ. ուղարկվել է Ընկերության պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:

ՀՀ պաշտպանության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 14.02.2018թ. ժամը 10:30-ի և 20.02.2018թ. ժամը 12:10-ի նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/24 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/24 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության և «Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ի միջև 31.05.2017թ. կնքվել է ապրանքի մատակարարման «ՇՀԱՊՁԲ-9/3-5» ծածկագրով գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

2. Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետով «Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում (հավելված N 2) գնորդին (տվյալ դեպքում՝ ՀՀ պաշտպանության նախարարությանը) կամ նրա կողմից որոշված ստացողին մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ (այսուհետ նաև՝ Ապրանք), իսկ գնորդը պարտավորվել է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար (հավելված N 3):

3. Պայմանագրի հավելված N 2-ի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով մատակարարել 40 դոզա «իմունային շիճուկ (հակագանգրենոզ շիճուկ 20,0)»՝ 2017թ. 3-րդ (20 դոզա) և 4-րդ (20 դոզա) եռամսյակների

ընթացքում (մինչև 30.11.2017թ.), 80 տուփ «հակաթունային շիճուկ (օձի) j06aa03 (օձի պոլիվալենտ սիճուկ)»՝ 2017թ. 3-րդ եռամսյակի ընացքում, 350 հավաքածու «կատաղության դեմ պատվաստանյութ j07bg (անտիռաբիկ վակցինա)»՝ 2017թ. 2-րդ (100 հավաքածու), 3-րդ (120 հավաքածու) և 4-րդ (130 հավաքածու) եռամսյակների (մինչև 30.11.2017թ) ընթացքում:

4. Համաձայն կողմերի միջև 29.09.2017թ. կնքված 31.05.2017թ. «ՇՀԱՊՁԲ-9/3-5» ծածկագրով գնման պայմանագրի փոփոխված գնման ժամանակացույցի՝ Ընկերությունը պարտավորվել է մատակարարել 40 դոզա «իմունային շիճուկ (հակագանգրենոզ շիճուկ 20,0)»՝ 2017թ. 4-րդ եռամսյակի ընթացքում (20 դոզան՝ մինչև 30.10.2017թ., 20 դոզան՝ մինչև 30.11.2017թ.):

5. «Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ին ուղղված 02.02.2018թ. ԴՎԱ/400 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ Պատվիրատուն, հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ի միջև 31.05.2017թ. կնքված ապրանքի մատակարարման «ՇՀԱՊՁԲ-9/3-5» ծածկագրով պայմանագրի 3.1.7 կետը, 3.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ 29.01.2018թ. միակողմանի «Հակագանգրենոզ շիճուկ 20,0» ապրանքատեսակի մասով լուծում է «ՇՀԱՊՁԲ-9/3-5» ծածկագրով պայմանագիրը:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 09.02.2018թ. թիվ 03/26-3/2179-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 06.02.2018թ. թիվ ԴՎԱ/435 գրությունը և կից փաստաթղթերը հայտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՕ-21-Ն օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ սույն օրենքի պահանջները չեն տարածվում մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելն սկսած և չդադարած, ինչպես նաև կնքված և գործող գնման գործարքների վրա, իսկ դրանց հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների կնքման պահին գործող իրավական ակտերով:

«Գնումների մասին» ՀՕ-206-Ն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ի միջև 31.05.2017թ. կնքվել է ապրանքի մատակարարման «ՇՀԱՊՁԲ-9/3-5» ծածկագրով գնման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետով «Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում (հավելված N 2) գնորդին (տվյալ դեպքում՝ ՀՀ պաշտպանության նախարարությանը) կամ նրա կողմից որոշված ստացողին մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ (այսուհետ նաև՝ Ապրանք), իսկ գնորդը պարտավորվել է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար (հավելված N 3):

Պայմանագրի հավելված N 2-ի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով մատակարարել 40 դոզա «իմունային շիճուկ (հակագանգրենոզ շիճուկ 20,0)»՝ 2017թ. 3-րդ (20 դոզա) և 4-րդ (20 դոզա) եռամսյակների ընթացքում (մինչև 30.11.2017թ.), 80 տուփ «հակաթունային շիճուկ (օձի) j06aa03 (օձի

պոլիվալենտ սիճուկ)»՝ 2017թ. 3-րդ եռամսյակի ընթացքում, 350 հավաքածու «կատաղության դեմ պատվաստանյութ j07bg (անտիռաբիկ վակցինա)»՝ 2017թ. 2-րդ (100 հավաքածու), 3-րդ (120 հավաքածու) և 4-րդ (130 հավաքածու) եռամսյակների (մինչև 30.11.2017թ) ընթացքում:

Միևնույն ժամանակ կողմերի միջև 29.09.2017թ. կնքված 31.05.2017թ. «ՇՀԱՊՁԲ-9/3-5» ծածկագրով գնման պայմանագրի փոփոխված գնման ժամանակացույցով նախատեսվել է, որ Ընկերությունը 40 դոզա «իմունային շիճուկ (հակագանգրենոզ շիճուկ 20,0)» ապրանքը պարտավոր է մատակարարել 2017թ. 4-րդ եռամսյակի ընթացքում (20 դոզան՝ մինչև 30.10.2017թ., 20 դոզան՝ մինչև 30.11.2017թ.):

Համաձայն ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետի՝ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետի ժ/պ ուղղված 26.01.18թ. զեկուցագրի՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ի միջև 31.05.2017թ. կնքված «ՇՀԱՊՁԲ-9/3-5» ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում «Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 18.01.2018թ. դրությամբ չի մատակարարվել 40 դոզա «իմունային շիճուկ (հակագանգրենոզ շիճուկ 20,0)» ապրանքը:

«Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ին ուղղված 02.02.2018թ. թիվ ԴՎԱ/400 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ի միջև 31.05.2017թ. կնքված ապրանքի մատակարարման «ՇՀԱՊՁԲ-9/3-5» ծածկագրով պայմանագրի համաձայն, Ընկերությունը ի թիվս այլ ապրանքատեսակների, պարտավոր էր ՀՀ պաշտպանության նախարարությանը մինչև 30.11.2017թ. մատակարարել 40 դոզա «Հակագանգրենոզ շիճուկ 20,0»՝ 3 360 000 ՀՀ դրամ ընդհանուր գնով:

Նույն գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ի միջև 31.05.2017թ. կնքված ապրանքի մատակարարման «ՇՀԱՊՁԲ-9/3-5» ծածկագրով պայմանագրի 3.1.7 կետը, 3.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 29.01.2018թ. միակողմանի «Հակագանգրենոզ շիճուկ 20,0» ապրանքատեսակի մասով լուծում է «ՇՀԱՊՁԲ-9/3-5» ծածկագրով պայմանագիրը:

Այսպես՝ Պայմանագրի 3.1.7 կետը սահմանում է, որ գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը:

Պայմանագրի 3.1.7.1 կետի համաձայն՝ վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալը, Խորհուրդն արձանագրում է, որ «Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից թույլ է տրվել ՀՀ պաշտպանության նախարարության և «Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ի միջև 31.05.2017թ. կնքված ապրանքի մատակարարման «ՇՀԱՊՁԲ-9/3-5» ծածկագրով պայմանագրով նախատեսված պարտավորության խախտում, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը, քանի որ Ընկերությունը Պայմանագրով պարտավորվել է 2017թ. 4-րդ եռամսյակի ընթացքում (մինչև 30.11.2017թ.) մատակարարել 40 դոզա ընդհանուր քանակով «Հակագանգրենոզ շիճուկ 20,0», որը սակայն Ընկերության կողմից չի մատակարարվել ընդհանրապես, որի հետևանքով Ընկերությունը, համաձայն Պայմանագրի 3.1.7.1 կետի «բ» ենթակետի, էականորեն խախտել է Պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՕ 206-Ն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը:***

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից խախտվել է Պայմանագրով նախատեսված մեկ պարտավորություն, Խորհուրդը գտնում է, որ առկա չէ Ընկերությանը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.02.2018թ. թիվ 03/26-3/2179-18 գրությամբ «Վարդալ Ֆարմ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01570878) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**